ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

**ՈՐՈՇՈՒՄ**

№ 2017-2-3-Ա

ք. Երևան 13.03.2017թ.

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2017 թվականի մարտի 13-ի նիստում քննարկեց 2017 թվականի փետրվարի 24-ին Ռոբերտ Զալիբեկի Ջիջյանի (այսուհետ՝ բողոքարկող) կողմից ներկայացված գյուտի (հայտ AM20160062) արտոնագիր տալն ամբողջությամբ մերժելու մասին փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Գյուտի հայտը մերժվել էր հետևյալ հիմքերով.

Գործակալությունը որոշում է մերժել արտոնագիր տալը ամբողջությամբ, քանի որ ներկայացված հավակնության սահմանմամբ՝ հայտարկված գյուտը՝ առաջին հայացքից (ակնհայտորեն, բացահայտորեն), չի համապատասխանում «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ Օրենքի 14-րդ հոդվածով սահմանված արտոնագրաունակության «արդյունաբերորեն կիրառելիության» պայմանին: Ելնելով հայտի նյութերից փորձաքննությունը գտնում է, որ հայտում նշված նշանակությամբ գյուտն իրականացնելու համար հայտի նյութերում նկարագրված միջոցները բավարար չափով բացահայտված չեն, ինչը հնարավոր չի դարձնում իրականացնել գյուտի խնդիրը՝ «մեծացնել պատկերի ճանաչման պրոցեսի արագությունը»: Մասնավորապես, բացահայտված չեն սարքի տակտիլային պատկերի մակերևույթը (էկրանը) մարդու մաշկին սևեռող հանգույցի կառուցվածքը, դրա միակցումը մակերևույթի (էկրանի) հետ: Բացահայտված չէ նաև, թե մարդու մաշկի կոնկրետ ո՞ր հատվածին է հպվում տակտիլային պատկերի մակերևույթը (էկրանը), այնինչ սևեռող հանգույցի կառուցվածքն ուղղակիորեն կախված է մաշկի ընտրված հատվածից: Ըստ էության, հայտի նյութերում ներկայացվածը կույր և թույլ տեսողություն (տեսողության խանգարումներ) ունեցող մարդկանց համար նախատեսված

տակտիլային սարքի գաղափարն է, այլ ոչ թե սարքի իրականացման կոնկրետ կառուցվածքը (դրա տարբերակները):

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մասնակիորեն բավարարելու, փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու և գյուտի հայտով գործավարությունը շարունակելու վերաբերյալ:

Բողոքարկողը նույնպես համաձայնվեց կոլեգիայի առաջարկի հետ:

Համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով բողոքարկման խորհուրդը.

**Ո Ր Ո Շ Ե Ց**

Բողոքը մասնակի բավարարել, փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և գյուտի (հայտ AM20160062) հայտով գործավարությունը շարունակել:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ